

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Սնանկության ինստիտուտը երկրի տնտեսական գրավչության կարևոր ցուցիչներից մեկն է թե՛ ներքին, թե՛ արտաքին տեսանկյունից: Այն տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է, որը, մի կողմից՝ կոչված է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ վարույթի շրջանակներում հավաքագրված միջոցներն արդար բաշխելով վերջիններիս միջև, մյուս կողմից՝ օրենսդրական կարգավորումների ներդրման միջոցով փրկել գոյատևման ընդունակ տնտեսվարող սուբյեկտներին¹: Հենց այս պատճառով էլ անվիճելի է, որ սնանկության ինստիտուտի պատշաճ կարգավորումն ու կիրառումը հանդիսանում է յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից մեկը, իսկ դրա բացակայությունը կարող է պարունակել ընդհուպ կոռուպցիոն ռիսկեր:

Սնանկության համակարգի պատշաճ և արդյունավետ կարգավորումների անհրաժեշտության վերաբերյալ բարձրաձայնվում է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ՄԱԿ ՄԱԻՀ) կողմից մշակված «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցը սահմանում է, որ իրավական համակարգերը պետք է ապահովեն համարժեք իրավական մեխանիզմներ այն իրավիճակների կարգավորման համար, երբ պարտապանը ի վիճակի չէ մարելու պարտքերը և այլ պարտավորությունները, որոնց ժամկետը լրացել է²:

¹ Տե՛ս ՍԴ 14.09.2021թ. թիվ ՍԴՈ-1609 որոշումը:

² Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf:

Անդրադառնալով Հայաստանում սնանկության ոլորտի կարգավորմանը, հարկ է նշել, որ այն ապահովվում է 2006 թվականին ընդունված «Սնանկության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), որն այս ընթացքում ենթարկվել է մի շարք փոփոխությունների:

Դեռևս Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության շրջանակում նախատեսվել էին այս ոլորտի բարեփոխման մի շարք ռազմավարական ուղղություններ:

Այս համատեքստում Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում ԱՆ նախաձեռնությամբ Ազգային ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել են «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքները, դրանց հիման վրա անհրաժեշտ ենթաօրենսդրական իրավական ակտերը:

Վերոնշյալ ռազմավարության կենսագործման արդյունքում «Սնանկության մասին» օրենքում արդեն իսկ իրականացվել են մի շարք փոփոխություններ: Այնուամենայնիվ, սնանկության մասին օրենսդրությունը դեռևս ունի զգալի բարեփոխման կարիք, ինչը մի կողմից պայմանավորված է իրավական բացերի առկայությամբ, իսկ մյուս կողմից առկա կարգավորումների անկատարություններով, որոնց լուծումն ունի առանցքային նշանակություն:

Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1133-Լ որոշման շրջանակում ևս սնանկության ոլորտի բարեփոխումներն արտացոլվեցին որպես օրակարգային ուղղություն: Մասնավորապես, սնանկության ոլորտի օրենսդրության բարելավումը նպատակ է հետապնդում կարգավորել այն խնդիրները, որոնք չեն լուծվել արդեն իսկ կատարված բարեփոխումներով կամ որոնց անհրաժեշտությունը բացահայտվել է այդ փոփոխությունների կիրառման շրջանակներում,

այդ թվում՝ սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները մեկ միասնական ակտով կարգավորելու կարևորության հաշվառմամբ:

Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը, ի թիվս այլնի, որպես նպատակ նախանշում է սնանկության ոլորտի բարեփոխումը և սնանկության ունիվերսալ օրենսդրության մշակումը՝ որպես ռազմավարական ուղղություն:

Ղեկավարվելով հիշյալ իրավական հիմքով՝ Արդարադատության նախարարությունը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ կազմավորեց ներպետական և միջազգային փորձագետներից կազմված հանձնախումբ, որը շուրջ երեք տարի՝ ՀՀ արդարադատության նախարարության անմիջական համակարգմամբ ներգրավված է սնանկության օրենսդրության բարեփոխման, մասնավորապես Սնանկության նոր օրենսգրքի մշակման աշխատանքներում:

Սնանկության նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք ծանրակշիռ փաստարկներով:

1) Սնանկության վարույթի շրջանակում ծագող իրավահարաբերությունների վերաբերյալ կարգավորումների ապակենտրոնացում

Միջազգային գործընկերների աջակցությամբ իրականացված ոլորտային հետազոտություններով արձանագրվել են սնանկության ոլորտի մի շարք խնդիրներ³: Նշված փաստաթղթերում, ի թիվս այլնի արձանագրվել է, որ երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է ունենալ Սնանկության օրենսգիրք, որի հիման վրա սնանկության գործընթացի առանցքային ուղղությունները պետք է սահմանվեն մեկ միասնական ինքնուրույն փաստաթղթում՝ որպես ուղեցույց գործընթացի բոլոր մասնակիցների համար: Օրենսգիրքը, այդպիսով, կդառնա սնանկության բոլոր հարցերին առնչվող ունիվերսալ, համապարփակ և արդյունավետ գործող իրավական ակտ:

Ընդ որում, հարկ է նշել, որ ՄԱԿ ՄԱԻՀ «Սնանկության մասին» օրենսդրական ուղեցույցի համաձայն՝ չնայած նյութաիրավական հարցերի բազմազանությանը, որոնք պետք է լուծվեն սնանկության մասին օրենքներով, սնանկության համակարգն ունի նաև խիստ

³ Առավել մանրամասն տե՛ս Սնանկության օրենսդրության բարեփոխման հայեցակարգ (<https://www.e-draft.am/projects/6701>), էջ 9:

ընթացակարգային բնույթ: Դատավարական կանոնների ձևավորումը կարևոր նշանակություն ունի դերերը տարբեր մասնակիցների միջև բաշխելու՝ հատկապես որոշումների կայացման առումով⁴:

Դրանով իսկ պայմանավորված մի շարք երկրներ իրենց սնանկության համակարգը կայացնելիս, նյութաիրավական և ընթացակարգային հարցերը կարգավորել են մեկ համապարփակ ակտով, օրինակ՝ Ֆինլանդիան, Լատվիան, Գերմանիան և այլն:

Ողջ վերոնշյալով պայմանավորված՝ սնանկության ոլորտի համապարփակ բարեփոխման հրամայականը Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթությունների շարքում է՝ հաշվի առնելով շուկայական տնտեսության արդի միտումները և զարգացող տնտեսական հարաբերությունները:

Ուշագրավ է նաև այն, որ «Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն գնահատված երկրների շարքում «Սնանկության կարգավորում» ցուցիչով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցրել է 95-րդ տեղը⁵: Հայաստանի Հանրապետության զբաղեցրած դիրքը և արձանագրած ցուցանիշները արդյունք են «Գործարարությամբ զբաղվելը-2019» Համաշխարհային բանկի զեկույցի «Սնանկության կարգավորում» ցուցիչով ներկայացված որոշ հարցերի վերաբերյալ Օրենքում անհրաժեշտ կարգավորումների բացակայության կամ թերի կարգավորումների առկայության:

Ներկա տեսքով ոլորտին առնչվող հասարակական հարաբերությունների կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերը չեն բավարարում միասեռ հարաբերությունների կարգավորման միասնականության նվազագույն պահանջներին և որևէ հիմքով համակարգված չեն:

2) Սնանկության օրենսդրության ընդհանուր դրույթների համապարփակ սահմանում

Օրենքով սահմանված չեն հիմնական հասկացությունները, սնանկության առանձին վարույթների սկզբունքները, ինչը հաճախ դժվարություններ է առաջացնում սնանկության վարույթի արդյունավետ գործարկման համար:

⁴ Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf:

⁵ Տե՛ս <https://archive.doingbusiness.org/en/data/exploreeconomies/armenia>:

3) Անվճարունակության հատկանիշները և սնանկ ճանաչվելու հիմքերը

Օրենսդիրը որպես պարտապանի անվճարունակության հիմք սահմանում է պարտապանի պարտավորությունների՝ պարտապանի ակտիվները գերազանցելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն):

Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, որ սնանկության շեմի միասնական մոտեցում է սահմանվում թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձ պարտատերերի համար:

Գործնականում անհրաժեշտ է նաև պարզեցնել ֆիզիկական անձ պարտապանի կամավոր սնանկության դեպքում դիմում ներկայացնելու գործընթացը՝ պարտապանի գույքային վիճակի վերաբերյալ տվյալների ներկայացումը սահմանափակելով պարտապանի ստորագրված հայտարարությամբ և սահմանելով քրեական պատասխանատվություն դրա կեղծ կամ ոչ ամբողջական լինելու համար:

4) Սնանկության կանխարգելման արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը

Պարտապանները գործնականում սնանկության ինստիտուտը հաճախ օգտագործում են ոչ թե ըստ հիմնական նպատակի, այլ շահադիտական մղումներով ծառայեցնում են որպես պարտավորություններից ազատվելու միջոց՝ հաշվի առնելով իրավական բացերը և ոչ հստակ կարգավորումները:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ պարտապանի անվճարունակության հիմքերը ծագում կամ ուղեկցվում են բնականոն տնտեսավարման հետ չկապված և ոչ իրավաչափ բնույթ կրող գործողություններով՝ այլ կերպ ասած կանխամտածված եղանակով:

Հարկ է նշել, որ վերոնշյալ չարաշահումների կանխարգելման և դրանց դեմ պայքարի համատեքստում կարևոր է սնանկության կանխարգելիչ արդյունավետ կառուցակարգերի առկայությունը, որոնք ձեռնարկվում են մինչև սնանկության վարույթի հարուցումը և կոչված են կանխելու պարտապանի անվճարունակության հատկանիշների ի հայտ գալը կամ վերացնելու դրանք: Մինչդեռ գործող Օրենքով նախատեսված մեխանիզմները, այդ թվում՝ սնանկության վտանգի վարույթը, կանխամտածված կամ կեղծ սնանկության բացասական հետևանքները գործնականում կիրառելի չեն:

5) Սնանկության դիմումները և դրանց արդյունքներով կայացվող որոշումները

Օրենքով առանձնացված չեն սնանկության դիմումին ներկայացվող պահանջներն ու կից ներկայացվող փաստաթղթերը՝ ըստ դիմումների տեսակների (կամավոր սնանկության դիմում, հարկադրված սնանկության դիմում) և ըստ սուբյեկտների (ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու դիմում և իրավաբանական անձին սնանկ ճանաչելու դիմում):

Գործող կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում քննարկման առարկա է, օրինակ՝ կամավոր սնանկության դեպքում կից ներկայացվող փաստաթղթերի պահանջների պարզեցման հարցը, քանի որ շատ դեպքերում վերոնշյալ փաստաթղթերի ներկայացումը ծախսատար է և պահանջում է մի շարք հարցումների իրականացում, որը բնականաբար հնարավոր չէ իրականացնել, քանի որ դիմում ներկայացնում է արդեն իսկ ֆինանսական դժվարություն ունեցող սուբյեկտը:

6) Ֆիզիկական անձ պարտապանը սնանկության վարույթում

Ֆիզիկական անձանց սնանկության մասին կարգավորումները շատ ընդհանրություններ ունեն սնանկության մասին ընդհանուր կարգավորումների հետ, որոնք նախատեսված են հիմնականում բիզնես պարտապանների համար, սակայն առաջինները տարբերվում են պարտապանի վճարունակության վերականգնման և սոցիալական բարօրության նկատմամբ իրենց առավել ընդգծված շահագրգռվածությամբ:

Առաջնային խնդիրներից մեկը, որին անհրաժեշտ է անդրադառնալ, սնանկության վարույթին ֆիզիկական անձանց հասանելիության աստիճանն է:

Հայաստանյան իրականությունում վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2019-2022 թվականներին աճել են պարտապան ֆիզիկական անձանց կողմից սնանկության դիմում ներկայացնելու դեպքերը: Մասնավորապես 2019 թվականին ներկայացվել է 987, 2020 թվականին՝ 1747, 2021 թվականին՝ 1961 դիմում, իսկ 2022 թվականին՝ 2800 դիմում⁶: Այսպիսով, շատ դեպքերում կամավոր սնանկության դիմում ներկայացնելը դարձել է պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց: Ուստի անհրաժեշտ է օրենքով

⁶Տե՛ս <https://court.am/hy/statistic>:

սահմանել մեխանիզմներ, որոնք կկանխեն նման չարաշահումները և սնանկության վարույթը կծառայեցնեն իր նպատակին:

Մյուս հարցը վերաբերում է պարտքերից ազատմանը: Երկրները տարբեր մոտեցումներ են որդեգրել այս հարցում⁷: Որոշ երկրներում անվճարունակ պարտապանը չի կարող ազատվել պարտքերից, քանի դեռ նրա բոլոր պարտքերը չեն վճարվել: Այլ դեպքերում՝ պարտապանը շարունակում է պատասխանատվություն կրել չբավարարված պահանջների համար՝ որոշակի սահմանափակ ժամկետի ընթացքում (որը որոշ դեպքերում կարող է բավականին երկար լինել, օրինակ՝ 10 տարի), և դրանից հետո նոր կարող է ազատվել պարտավորություններից:

Ֆիզիկական անձանց սնանկության վարույթի մասին խոսելիս, անհրաժեշտ է Սնանկության նոր օրենսգրքով հստակ ամրագրել նաև աշխատավարձի բռնագանձման հնարավորության ապահովումը:

7) Այլ սուբյեկտների սնանկությունը

7.1) Միկրո, փոքր և միջին ձեռնարկատերերը, հատկապես զարգացող տնտեսություններում, կազմում են ընդհանուր բիզնեսի մեծամասնությունը, և զբաղվածության, տնտեսական աճի և զարգացման շարժիչ ուժերն են: Ընդհանուր առմամբ ՓՄՁ-ները կազմում են բիզնեսի 90%-ը⁸, ապահովում են մասնավոր ոլորտի զբաղվածության 60%-ը⁹, և մասնավոր հատվածի ավելացված արժեք վճարողների 52%-ն են¹⁰:

ՓՄՁ-ներն իրենց փոքր չափի պատճառով միշտ ունեն ավելի քիչ կապիտալ, վարկեր ստանալու ավելի մեծ դժվարություններ և ֆինանսական մարտահրավերները լուծելու ավելի

⁷ Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf , էջ 282:

⁸ Տե՛ս Global Partnership for Financial Inclusion, “G20 Action Plan on SME Financing - Joint Action Plan of G20 GDFI SME Finance Sub-Group and IIWG”, 2016, էջ 3. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.gpfi.org/sites/gpfi/files/documents/G20%20Action%20Plan%20on%20SME%20Financing%20Implementation%20Frame%20work.pdf>:

⁹ Տե՛ս Edinburgh Group, “Growing the global economy through SME”, 2013, էջ 7 հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.edinburgh-group.org/media/2776/edinburgh_group_research_-_growing_the_global_economy_through_smes.pdf:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 7:

քիչ ունակություն¹¹: Նրանց գործունեության ուղղությունները չունեն բազմազանություն և, հետևաբար, նրանք ավելի խոցելի են ֆինանսական ցնցումների համար¹²:

Նշվածի հաշվառմամբ քննարկման առարկա է գերփոքր կազմակերպությունների համար որոշակի արտոնությունների սահմանումը, օրինակ՝ որոշակի ընթացակարգերի պարզեցման և առավել ծախսարդյունավետ դարձնելու հարցը՝ ազատելով որոշակի պետական տուրքերից:

7.2) Մի շարք երկրներում օրենսդրական մակարդակով կարգավորված է պետության համար հատուկ կարևորություն ունեցող կազմակերպությունների¹³ սնանկության վարույթը որպես հատուկ վարույթ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ևս գյուղատնտեսական ձեռնարկությունների սնանկության վարույթի վերաբերյալ առանձնահատկությունների կարգավորումը կարող է վերաբերել լինել՝ հաշվի առնելով գյուղատնտեսական կոոպերատիվների մեծ քանակը:

8) Ֆինանսական առողջացման հետ կապված հարցեր

Ֆինանսական առողջացումների վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ, չնայած սնանկության գործերի մեծաթիվ լինելուն, այդպիսի ելքով սնանկության գործերի ավարտը խիստ սակավ է: Այս հանգամանքը, ի թիվս այլնի, պայմանավորված է որոշակի օրենսդրական խոչընդոտներով և այլ խնդիրներով: Բացի այդ, գործող օրենսդրությունը ֆինանսական առողջացման և լուծարման վարույթները, որպես կանոն, դիտարկում է հաջորդական տրամաբանությամբ՝ բացառությամբ սնանկության վտանգի վարույթի և լուծարման վարույթում պարտապանի գործունեության վերսկսման:

Ֆինանսական առողջացման գործընթացի ձախողման պատճառ կարող է դառնալ պարտատիրոջ կամ պարտատերերի օբյեկտիվ հիմնավորում չունեցող դեմ քվեարկությունը:

¹¹ Տե՛ս Khrystyna Kushnir, Melina Laura Mirmulstein and Rita Ramalho, The World Bank / IFC, “Micro, Small and Medium Enterprises Around the World: How Many Are There and What Affects the Count?” 2010, էջ 6 <https://www.mfw4a.org/sites/default/files/resources/Micro%20Small%20and%20Medium%20Enterprises%20Around%20the%20World%20How%20Many%20Are%20There%20and%20What%20Affects%20the%20Count.pdf>:

¹² Տե՛ս Organisation for Economic Co-operation and Development (OECD), “The Impact of the Global Crisis on SME and Entrepreneurship Financing and Policy Responses”, 2009, էջ 6 <http://www.oecd.org/cfe/smes/43183090.pdf>:

¹³ Որոշ երկրներում կիրառվում է «քաղաքաստեղծ կազմակերպություն» եզրույթը և դրա հիմքում դրվում է տարբեր չափանիշներ, օրինակ՝ կազմակերպությունը բնական մենաշնորհի սուբյեկտ է, կազմակերպության աշխատողների թիվը առնվազն երեք հազար մարդ է, կազմակերպության աշխատողների թիվը, ներառյալ նրանց ընտանիքի անդամները, կազմում է համապատասխան բնակավայրի բնակչության առնվազն կեսը և այլն:

Ընդ որում, գործող Օրենքով ֆինանսական առողջացման ծրագիրը դատարանի հաստատման է ներկայացվում միայն պարտատերերի կողմից սահմանված կարգով ընդունվելու դեպքում: Ծրագիր չներկայացվելու կամ չհաստատվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում լուծարման վարույթ սկսելու մասին:

Մյուս խնդիրն առնչվում է գործող օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական առողջացման ծրագրերի առավելագույն ժամկետներին, որոնք նախատեսված են գործող օրենսդրությամբ, ինչը գործնականում խնդրահարույց է հատկապես երկարաժամկետ ֆինանսավորման կամ ներդրումային ծրագրերի դեպքում: Արդյունքում, կենսունակ ֆինանսական առողջացման ծրագրով պարտապանի առողջանալու իրական հնարավորությունը կարող է բաց թողնվել ծրագրի երկարաժամկետ լինելու հետևանքով: Չնայած մի կողմից սա ուղղված է պարտատերերի շահերի պաշտպանությանը՝ նրանց պահանջների հնարավորինս սեղմ ժամկետում բավարարումն ապահովելուն, սակայն մյուս կողմից պետք է հնարավորություն տրվի պարտատերերին դիտարկելու նաև երկարաժամկետ ծրագրերը՝ որպես պարտապանի լուծարման այլընտրանք: Ամեն դեպքում, գործող կարգավորումների համատեքստում հնարավորություն չկա ծրագրի ժամկետը ի սկզբանե օրենքով սահմանված առավելագույն ժամկետով սահմանելու համար: Ավելին, նույնիսկ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի երկարաձգման հեռանկարը բավարար չէ, քանի որ նախատեսվող ֆինանսավորման համար անհրաժեշտ է ավելի տևական ժամանակահատված:

Հստակեցման ենթակա են նաև ֆինանսական առողջացման ժամանակ կիրառվող միջոցառումների իրականացմանն ուղղված կարգավորումները: Չնայած օրենքը նման միջոցառումների ցանկ չի սահմանում և դրանց իրականացումը թողնում է առողջացման ծրագրի կարգավորմանը, սակայն անհրաժեշտ է դիտարկել որոշ դեպքերում այդ միջոցառումների իրականացման ընթացքի և դրանց հետևանքների վերաբերյալ օրենսդրական հստակ կարգավորումներ նախատեսելու հնարավորությունը, որոնք կվերաբերեն, օրինակ, ֆինանսական առողջացման ընթացքում պարտքի նկատմամբ տոկոսների և տույժերի հաշվարկմանը, պարտավորությունների մարման ժամանակացույցի

խախտման տևողության սահմանմանը և այլ հարցերի: Այլապես առկա են հայեցողական որոշումների կայացման ռիսկեր:

Ֆինանսական առողջացման գրավչությունը բարձրացնելու հիմնական գործիքներից մեկը կարող է հանդիսանալ սնանկության կառավարչի խրախուսման միջոցները: Չնայած Օրենքը նախատեսում է նման մեխանիզմներ, օրինակ՝ պարգևավճարներ ֆինանսական առողջացման հաջող ավարտի դեպքում, սակայն անհրաժեշտ է դիտարկել նաև խրախուսման այլ ձևեր:

Ֆինանսական առողջացման վարույթի հարուցման հնարավորությունը սահմանափակված է մինչև պարտատերերի առաջին ժողովը, այնինչ պրակտիկայում շատ հաճախ առողջացման հիմքեր առաջանում են լուծարման վարույթի ընթացքում: Այս առումով թեկուզև որոշակիորեն հարցը լուծվում է պարտապանի գործունեության վերսկսման ինստիտուտի միջոցով, սակայն դրա իրականացման կարգը, հնարավոր միջոցառումները չեն ստացել օրենսդրական ամրագրում, իսկ նախատեսված մեկամյա առավելագույն ժամկետը ակնհայտորեն անբավարար է:

Հստակեցման կարիք ունի ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում մորատորիումի գործողության կամ գործողությունը բացառելու հարցերի, այդ թվում՝ այդ ընթացքում պարտապանի կողմից գործարքներ կնքելու հարցերի հստակեցումը:

Ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքներով որևէ գույք չհայտնաբերելու դեպքում հարկ է ունենալ սնանկության գործը արագացված ռեժիմով ավարտելու հնարավորություն:

9) Լուծարման վարույթի հետ կապված հարցերը

Գործող օրենքով նախատեսված չեն լուծարման վարույթում պարտապանի գույքի՝ անկախ գնահատողի կողմից գնահատումը պարտադրող կարգավորումներ: Նախատեսված չեն նաև գույքն ուղղակի վաճառքով իրացնելու սահմանափակումներ, ինչը որոշակի ռիսկեր է առաջացնում: Գործող օրենքով նախատեսված չէ նաև լուծարման վարույթից ֆինանսական առողջացման վարույթ անցնելու հետ կապված կարգավորումներ: Նախատեսված չեն նաև գույքի միջոցով պարտավորությունների մարման հնարավորություններ:

10) Հաշտության համաձայնության կնքման ժամկետային սահմանափակումներ

Գործող օրենքի համաձայն՝ կողմերը կարող են կնքել հաշտության համաձայնություն սնանկության դիմումը հետ վերցնելու համար սահմանված ժամկետում:

11) Սնանկության կառավարիչները

11.1) Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում որպես սնանկության կառավարիչ կարող են որակավորվել միայն ֆիզիկական անձինք, մինչդեռ շատ երկրներում ընդունված է, որ որպես սնանկության կառավարիչ կարող է հանդես գալ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձը (Բելառուս, Լատվիա, Վրաստան, Իսպանիա, Հունգարիա, Անգլիա): Քննարկման առարկա է այս ոլորտում որոշակի փորձ ունեցող իրավաբանական անձանց մուտքն այս գործընթաց, հատկապես առավել խնդրահարույց գործերի դեպքում, երբ օրինակ ներգրավված է խոշոր հարկատու համարվող պարտապան, դրան կարող է հաղորդել նոր որակ և արդյունավետություն: Առանձնակի ուշադրության արժանի է զարգացած ավանդույթներ ունեցող օտարերկրյա սնանկության կառավարիչների ներգրավման հնարավորության բացակայությունը:

11.2) Օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ սնանկության կառավարիչը հանդես է գալիս պարտապանի անունից, մինչդեռ առկա են դեպքեր, երբ սնանկության վարույթի ընթացքում սնանկության կառավարիչը հանդես է գալիս նաև իր կամ պարտատիրոջ անունից, օրինակ՝ երաշխավորից գումարի բռնագանձման կամ պարտապանի ընդհանուր գույքից բաժին առանձնացնելու դեպքերը:

11.3) Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սնանկության կառավարիչների գործունեության չափանիշներից է, ի թիվս այլնի, անկախությունը և ինքնուրույնությունը: Հարկ է նկատել, որ Օրենքի վերջին բարեփոխումներով վերանայվեց սնանկության կառավարիչների նշանակման ընթացակարգը և ներմուծվեց հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վիճակահանությամբ սնանկության կառավարիչների նշանակման ընթացակարգը, որն իր հերթին ապահովում է վերոնշյալ անկախությունը:

12) Օտարերկրյա տարրի մասնակցությամբ վարույթը

Ներկայումս գործնականում հաճախ են հանդիպում իրավիճակներ, որ սնանկության վարույթ է հարուցվում ՀՀ տարածքում մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունեցող օտարերկրյա իրավաբանական անձի նկատմամբ: Մինչդեռ գործող օրենսդրությունն այս

մասով լուծւում է: Այսպիսով, Սնանկության օրենսգրքով հստակեցման ենթակա են այն դեպքերը, երբ ներպետական դատարաններին ընդդատյա են օտարերկրյա տարրի մասնակցությամբ սնանկության դեպքերը:

Նման պայմաններում օրենսդրության մեջ անվճարունակության միջազգային ասպեկտներին վերաբերող արդյունավետ և համագործակցային գործընթացների բացակայության պայմաններում, գործընթացը դառնում է դժվար, ծախսատար և ոչ արդյունավետ:

2. Նախագծի նպատակը և ակնկալվող արդյունքը.

Սնանկության նոր օրենսգրքի և հարակից օրենքների նախագծերով կարգավորվել են հետևյալ հարցերը.

1) Միասնականացվել և կենտրոնացվել են սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները:

2) Սահմանվել է օրենսգրքում օգտագործվող հասկացությունների և տերմինների մեկնաբանությունը, նախատեսվել է սնանկության վարույթի սկզբունքների առանձին գլուխ, ներառելով այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ պարտատերերի հավասարության, ակտիվների արդարացի բաշխման, բարեխղճության, գույքի արագ իրացման և այլ սկզբունքներ:

3) Հստակեցվել են ընթացակարգային մի շարք հարցեր, ինչպիսիք են գործերի ենթակայությունը և դատարանի կազմը:

4) Բացի նյութաիրավական ասպեկտներից Օրենսգրքի կարգավորման առարկա են դարձել նաև վարութային և դատավարական բոլոր ընթացակարգերը:

5) Հստակեցվել է սնանկության վարույթի մասնակիցների ցանկը:

6) Հստակեցվել և տարանջատվել են սնանկության վարույթի առանձին ընթացակարգային մասերը:

7) Տարանջատվել են պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց անվճարունակության հատկանիշները և սնանկ ճանաչվելու հիմքերը՝ դրանցից յուրաքանչյուրի հիմքում դնելով հստակ մեթոդաբանություն: Ընդ որում, որոշակիորեն

ներկայացվել է անվիճելի վճարային պարտավորություն հասկացությունը: Մասնավորապես, տվյալ հասկացության շրջանակից հանվել են գրավոր գործարքի վրա հիմնված պահանջները: Սա նշանակում է, որ պարտավորության կետանցի հիմքով սնանկության դիմում ներկայացվելիս պահանջվելու է, որ պարտավորությունը ճանաչված լինի օրինական ուժի մեջ մտած վճռով կամ բխի անբողոքարկելի դարձած վարչական ակտից (հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարների մասով), և տվյալ դատական ակտի կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի հարկադիր կատարումն ավարտված լինի բացասական ելքով:

8) Ամբողջությամբ նորովի նախագծվել է կանխարգելիչ վերակառուցման վարույթը՝ փոխարինելով սնանկության վտանգի վարույթին: Վերակառուցման վարույթով առաջարկվում են գործող սնանկության վտանգի վարույթից էականորեն տարբերվող լուծումներ, ներառյալ՝ վերակառուցման ծրագրի քվեարկությունը՝ ըստ պարտատերերի՝ շահերի ընդհանրության հիման վրա ծրագրով խմբավորված դասերի, ծրագրի հաստատման համար կառավարչի համաձայնություն չի պահանջվում, ապահովված պարտատերերին կարող է պարտադրվել վերակառուցման ծրագիրը՝ դատարանի որոշմամբ, սնանկության կառավարչի դերը սահմանափակվում է պարտապանի և պարտատերերի հետ բանակցելով և ծրագրի մշակման հարցում աջակցելով, տնօրինությունը շարունակում է կառավարել բիզնեսը¹⁴:

9) Հստակեցվել են սնանկության կանխարգելման դատական և արտադատական կառուցակարգերը:

10) Նախագծով առաջարկվում է՝ ըստ դիմումների տեսակների և սուբյեկտների առանձնացնել դիմումներին ներկայացվող պահանջներն ու կից ներկայացվող փաստաթղթերը՝ հաշվի առնելով սուբյեկտների համար սահմանված անվճարունակության հատկանիշները, գործող կանխավարկածները և յուրաքանչյուր դեպքում ապացուցման բեռը սահմանող կարգավորումները: Մասնավորապես, նախագծով նախատեսվել են կամավոր և հարկադրված սնանկության դիմումներին ներկայացվող պահանջները և կցվող փաստաթղթերը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար առանձնացված

¹⁴ Մշակվել է հիմք ընդունելով Կանխարգելիչ վերակառուցման շրջանակների մասին (ԵՄ) 2019/1023 դիրեկտիվով առաջարկվող լուծումները՝ <https://eur-lex.europa.eu/eli/dir/2019/1023/oj/eng>:

հողվածներով՝ իրավաբանական անձ պարտապանի կամավոր սնանկության դիմումին ներկայացվող պահանջները, դիմումին կցվող փաստաթղթերը, իրավաբանական անձ պարտապանի հարկադրված սնանկության դիմումին ներկայացվող պահանջները, դիմումին կցվող փաստաթղթերը: Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու դիմումների մասով ևս առանձնացվել են կամավոր և հարկադրված սնանկության դիմումներին ներկայացվող պահանջներն ու կցվող փաստաթղթերը: Սահմանվել են նաև նոր կարգավորումներ՝ դիմումը հետ վերցնելու, դիմումը ներկայացնելուց հետո դատարանի կողմից դիմումը վարույթ ընդունելու, դիմումի ընդունումը մերժելու, դիմումը վերադարձնելու և դիմումն առանց քննության թողնելու մասին:

11) Նախագծով նախատեսվել են ֆիզիկական անձ պարտապանի սնանկության համապարփակ կարգավորումներ, այդ թվում հստակեցվել են ֆիզիկական անձի գույքի կազմի և աշխատավարձի ու դրան հավասարեցված միջոցների բռնագանձման վերաբերյալ կարգավորումները: Նախատեսվել է պարտատերերի պահանջների հաստատման պարզեցված ընթացակարգեր կիրառելու հնարավորություն:

12) Ժամանակակից սնանկացման համակարգերի հիմնական գաղափարներից մեկը «բարեխիղճ պարտապանի» աջակցումն է՝ նրան հնարավորություն տալով ազատվելու մնացորդային պարտքերից որոշակի ընթացակարգի և պայմանների ապահովման դեպքում, իսկ համակարգի չարաշահման դեպքերում՝ պարտքից ազատումը բացառելով: Այս մոտեցումն արտացոլված է Համաշխարհային բանկի զեկույցներում, որտեղ շեշտվում է, որ պետք է նախատեսվեն բարենպաստ պայմաններ և բավարար երաշխիքներ պարտքից ազատման և «թարմ մեկնարկի» (fresh start) համար և պարտքից ազատումը պետք է հասանելի լինի այն պարտապաններին, ովքեր չեն չարաշահել սնանկության ընթացակարգը:¹⁵ Եվրոպական միության 2019/1023 թիվ Դիրեկտիվը ևս սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ապահովեն «երկրորդ հնարավորություն» ազնիվ, բայց սնանկ պարտատերերի համար՝ նրանց ողջամիտ ժամկետում պարտքերից լիարժեք ազատում տրամադրելով (սովորաբար մինչև երեք տարի), այդ թվում՝ վճարային կամ

¹⁵ [World Bank Document](#)

վերակազմավորման ծրագրի միջոցով:¹⁶ Նախագծով, նախատեսվել է ոչ միայն գույքի վաճառքի վարույթի, այլև ֆինանսական առողջացման վարույթի արդյունքներով ֆիզիկական անձ պարտապանի պարտքից ազատման իրավունքը: Մասնավորապես, նախատեսվել է, որ ժամանակահատվածը, որից հետո պարտապանը ազատվում է պարտքից, չի կարող գերազանցել ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ժամկետը: Այդ ժամանակահատվածի ավարտին պարտքի ազատումից օգտվող պարտապանը, որը կատարել է ծրագրով նախատեսված պարտականությունները, ամբողջությամբ համարվում է ազատված պարտքի մնացած մասից, բացառությամբ այն պարտքերի, որոնց գծով պարտքից ազատման ինստիտուտը չի գործում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով «պարտքից ազատման իրավունքի» առաջարկող ձևաչափով ամրագրումը, համապատասխանում է միջազգային լավագույն փորձին և ապահովում է արդար հավասարակշռություն պարտապանի «երկրորդ հնարավորության» ու պարտատերերի օրինական շահերի միջև:

13) Նախատեսվել են այն դեպքերը, երբ ֆիզիկական անձ պարտապանին պարտավորություններից ազատումը չի թույլատրվում, ներառյալ՝ եթե պարտապանը ենթարկվել է քրեական պատասխանատվության սնանկության ընթացքում անօրինական գործունեության կամ կանխամտածված սնանկության համար, դատական ակտով հաստատվել է, որ պարտապանի կողմից կառավարչին կամ դատարանին ներկայացվել են ակնհայտ կեղծ տվյալներ, կամ ապացուցված է, որ ֆիզիկական անձ պարտապանի պարտավորությունների կատարման ժամանակ նա դիտավորությամբ խուսափել է պարտատերերի պարտքերի մարումից, թաքցրել է գույքը, պարտավորությունը ստանձնելիս պարտատիրոջը տրամադրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ:

14) Նախատեսվել են հատուկ՝ պարզեցված կարգավորումներ փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների և հատուկ կարևորության կազմակերպությունների համար: Մասնավորապես, Նախագծով նախատեսվել են գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտների լուծարման առանձնահատկություններ: Ընդ որում, որպես գերփոքր

¹⁶ [DIRECTIVE \(EU\) 2019/ 1023 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL - of 20 June 2019 - on preventive restructuring frameworks, on discharge of debt and disqualifications, and on measures to increase the efficiency of procedures concerning restructuring, insolvency and discharge of debt, and amending Directive \(EU\) 2017/ 1132 \(Directive on restructuring and insolvency\)](#)

ձեռնարկատիրության սուբյեկտ սահմանվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության մասին» օրենքով նախատեսված՝ գերփոքր առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: Սահմանվել են պահանջների հաստատման պարզեցված ընթացակարգեր: Այս սուբյեկտների համար նախատեսվել են լուծարման վարույթի ավելի պարզեցված լուծումներ, ներառյալ՝ սնանկ ճանաչելու դիմումը ներկայացվում է սահմանված պարզեցված ձևաթղթերով, հաղորդակցությունն իրականացվում է հիմնականում էլեկտրոնային եղանակով, սահմանվել են դիմումի արդյունքներով որոշում կայացնելու սեղմ ժամկետներ, պահանջների ներկայացման և հաշվառման պարզեցված կարգ:

15) Նախագծով նախատեսվել են նաև հատուկ կարևորության կազմակերպությունների սնանկության, գյուղատնտեսական կազմակերպությունների սնանկության առանձնահատկությունները:

Մասնավորապես, հատուկ կարևորության կազմակերպությունների (որի աշխատողների թվաքանակը կազմում է տվյալ համայնքի աշխատող բնակչության թվի առնվազն 25 տոկոսը, կամ որի աշխատողների թիվը գերազանցում է 2000 անձը, կամ էներգետիկայի, ջրային և հեռահաղորդակցության ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք) մասով նախատեսվել են պետական մարմինների կողմից երաշխիքի տրամադրմամբ այս կազմակերպությունների ֆինանսական առողջացումը խթանելուն ուղղված կարգավորումներ, ինչպես նաև լուծարման վարույթի դեպքում այս կազմակերպությունների ձեռնարկության կամ գույքի իրացման առանձնահատկությունները: Սահմանափակվել է մեկ պարտատիրոջ կողմից այս կազմակերպությունների հարկադրված սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունը: Նախատեսվել են կարգավորումներ, որոնք հնարավորություն են տալիս այս շարունակել կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը սնանկության վարույթի ընթացքում:

Գյուղատնտեսական կազմակերպությունների մասով նախատեսվել են կազմակերպությունների սեզոնայնությունը հաշվի առնելով ֆինանսական առողջացման ավարտը սահմանելու, ինչպես նաև այդ կազմակերպությունների լուծարման դեպքում վերջիններիս ձեռնարկությունը կամ գույքը համապատասխան ոլորտում գործունեություն

իրականացնող կազմակերպությունների ձեռքբերման նախապատվության իրավունքը սահմանող կարգավորումներ:

16) Նախագծով առաջարկվում են հետևյալ հիմնական լուծումները. ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու համար պարտատերերը ծրագրով պետք է խմբավորվեն առանձին դասերի: Տարբերակման չափանիշները պետք է նշվեն ծրագրում, և յուրաքանչյուր դասում խմբավորված պարտատերերը պետք է ունենան շահերի բավարար ընդհանրություն՝ հիմնված ստուգելի չափանիշների վրա: Ֆինանսական առողջացման ծրագիրը համարվում է ընդունված, եթե ծրագրին կողմ են քվեարկել յուրաքանչյուր դասում խմբավորված պարտատերերի ձայների կեսից ավելին: Եթե ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պետք է օգտագործվի ապահովված պարտատիրոջ պահանջի դիմաց գրավադրված գույքը, ապա ապահովված պարտատիրոջ համաձայնությունը ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման կամ հաստատման համար պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական առողջացման ծրագիրը պարտադրման միջոցով հաստատվել է դատարանի կողմից:

Ֆինանսական առողջացումը կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ («cram-down»), պայմանով, որ խմբավորված պարտատերերի դասերից առնվազն մեկ դասի պարտատերերի ձայների կեսից ավելին կողմ են քվեարկել ծրագրին, և եթե ծրագիրը տարածվում է ապահովված պարտատերերի վրա, ապահովված պարտատերերին ծրագրով տրված է համարժեք պաշտպանություն, ինչպես նաև ծրագրով ապահովված է ծրագրին դեմ քվեարկած պարտատերերի շահերի պաշտպանվածությունը: Ֆինանսական առողջացումը դատարանի որոշմամբ պարտադրվելու դեպքում ապահովված պարտատերերի համարժեք պաշտպանությունն իրականացվելու է հետևյալ եղանակներով՝

1) ապահովված պարտատերերը ապահովման առարկայի իրացման դեպքում գոյացած միջոցներից ստանալու են առաջնային բավարարում,

2) ապահովված պարտատերը ծրագրի գործողության ընթացքում ստանալու է ապահովված պահանջի հաստատված չափով դրամական վճարումներ,

3) ծրագրի գործողության ընթացքում ապահովման առարկայի հնարավոր արժեզրկման դիմաց ապահովված պարտատերերին տրվելու է ապահովման առարկայի շուկայական

արժեքի իսկ անշարժ գույքի դեպքում մոտարկված կադաստրային արժեքի առնվազն 50 տոկոսի չափով լրացուցիչ ապահովում՝ պարտապանի այլ գույքերով,

4) ապահովված պարտատերերը ծրագրի ավարտին ստանալու են նաև հետաձգված կանխիկ վճարումների գծով տոկոսներ՝ ըստ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների,

5) ծրագրով ապահովման առարկայի վաճառք նախատեսված լինելու դեպքում, եթե ապահովման առարկան հնարավոր չի վաճառել ապահովված պահանջի առնվազն 90 տոկոսի չափով, ապա ապահովված պարտատերը ստանալու է պարտավորության բավարարուման նպատակով ապահովման առարկան ի սեփականություն վերցնելու իրավունք: Համարժեք պաշտպանության վերաբերյալ դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել ապահովված պարտատիրոջ կողմից:

Պարտապանի լուծարման վարույթ սկսվելու դեպքում նոր ֆինանսավորում տրամադրած անձինք առաջնահերթության կարգով բավարարում ստանալու իրավունք ունեն: Մասնավորապես նոր ֆինանսավորման գծով պահանջները համարվում են սնանկության վարույթի ընթացքում ձևավորված ծախս և բավարարվում են այդ ծախսերի համար սահմանված հերթականությամբ և կարգով:

17) Նախագծով նախատեսվել են գույքի արժեքի որոշման հստակ կառուցակարգեր և սահմանափակվել են ուղղակի վաճառքով իրացման դեպքերը:

18) Նախագծով նախատեսվում է նաև պարտատերերի պահանջների բավարարումը՝ փոխհատուցում տրամադրելով այն գույքով, որը չի վաճառվել՝ պարտատերերի ժողովի/խորհրդի որոշմամբ: Պարտապանի գույքը որպես փոխհատուցման միջոց փոխանցվում է այն պարտատերերին, որոնք համաձայնություն են ներկայացրել: Համաձայնություն չներկայացրած պարտատերերը համարվում են առաջարկից հրաժարված և պահպանում են պահանջի իրավունքը:

19) Նախագծի համաձայն՝ եթե լուծարման վարույթի ընթացքում կառավարիչն ունի բավարար հիմքեր ենթադրելու, որ պարտապանի վճարունակությունը կարող է վերականգնվել, ապա պարտավոր է հրավիրել պարտատերերի ժողով՝ լուծարման վարույթի դադարեցման և ֆինանսական առողջացման անցնելու վերաբերյալ դատարան դիմում

ներկայացնելու հարցով: Պարտատերերի ժողովի որոշման հիման վրա կառավարիչը միջնորդություն է ներկայացնում դատարան, որի հիման վրա դատարանը կարող է որոշում կայացնել լուծարման վարույթը դադարեցնելու և ֆինանսական առողջացման անցնելու վերաբերյալ, եթե պարտապանն ունի բավարար ակտիվներ, որոնք անհրաժեշտ են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

20) Նախագծով նախատեսվում է հաշտության համաձայնություն կնքելու հնարավորություն՝ սահմանելով կնքվող համաձայնության առանձնահատկությունները, հաշտության համաձայնության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման պայմանները, հաստատման հետևանքները և հաստատման մերժման դեպքերը:

21) Նախագծով նախատեսվել է բոլորովին նոր՝ պարտապանի ձեռնարկության վաճառքի վարույթը: Ձեռնարկության վաճառքի մասին որոշումը կայացնում է պարտապանի կառավարման այն մարմինը, որն իրավասու է որոշումներ ընդունել խոշոր գործարքների վերաբերյալ՝ հաշվեկշռային անվճարունակության հատկանիշների առկայության դեպքում: Վարույթը սկսված է համարվում պարտապանի պահանջով՝ ձեռնարկության վաճառքի համար կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշման կայացման պահից:

Ձեռնարկության վաճառքի դեպքում օտարվում են բոլոր այն գույքի տեսակները, որոնք նախատեսված են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար, ներառյալ՝ հողամասերը, շենքերը, կառուցվածքները, շինությունները, սարքավորումները, գույքը, հումքը, արտադրանքը, պահանջի իրավունքները, ինչպես նաև պարտապանի անհատականացման միջոցների նկատմամբ իրավունքները (առևտրային անվանում, ապրանքային նշաններ, սպասարկման նշաններ), նրա արտադրանքը (աշխատանքները, ծառայությունները), այլ բացառիկ իրավունքներ, որոնք պատկանում են պարտապանին, բացառությամբ այն իրավունքների և պարտականությունների, որոնք չեն կարող փոխանցվել այլ անձանց: Փոխանցվում են այն պայմանագրերը, որոնք անհրաժեշտ են ձեռնարկատիրական գործունեությունը շարունակելու համար, և որոնց դադարեցումը կհանգեցնի ձեռնարկատիրական գործունեության դադարեցմանը: Փոխանցման համար չի պահանջվում պարտապանի կոնտրագենտի կամ կոնտրագենտների համաձայնությունը,

բացառությամբ այն դեպքերի, երբ գնորդը պարտապանի կոնտրագենտի կամ կոնտրագենտների մրցակիցն է:

Ձեռնարկության վաճառքի դեպքում պարտապանի պարտքերն ու պարտավորությունները չեն ներառվում ձեռնարկության կազմում և չեն փոխանցվում գնորդին, բացառությամբ այն պարտքերի և պարտավորությունների կամ դրանց մասի, որոնց գծով գնորդը համաձայնություն է տվել:

22) Համաձայն նախագծի սահմանվել է իրավաբանական անձանց որպես սնանկության կառավարիչ որակավորելու հնարավորություն, ինչպես նաև սահմանվել են օտարերկրյա սնանկության կառավարիչների որակավորման ճանաչման հնարավորությունները:

23) Վերանայվել և հստակեցվել է սնանկության կառավարիչների լիազորությունների ծավալը՝ կախված սնանկության վարույթի փուլից՝ ֆինանսական առողջացում, լուծարում և այլն:

24) Նախագծով նախատեսվել են անդրսահմանային սնանկության հետ կապված համապարփակ կարգավորումներ, որոնք կիրառվում են, եթե Հայաստանի Հանրապետությունում օգնություն է հայցվում օտարերկրյա դատարանի կամ օտարերկրյա ներկայացուցչի կողմից՝ օտարերկրյա սնանկության վարույթի հետ կապված, կամ օտարերկրյա պետությունում օգնություն է հայցվում Օրենսգրքով նախատեսված սնանկության վարույթի հետ կապված, կամ միևնույն պարտապանի նկատմամբ միաժամանակ իրականացվում են օտարերկրյա սնանկության վարույթ և Օրենսգրքով նախատեսված սնանկության վարույթ, կամ օտարերկրյա պետությունում գտնվող պարտատերերը կամ այլ շահագրգիռ անձինք դիմում են Օրենսգրքի համաձայն սնանկության վարույթ սկսելու կամ դրան մասնակցելու համար: Նախատեսվել են կարգավորումներ, համաձայն որի օտարերկրյա ներկայացուցիչը իրավունք ունի վարույթ սկսելու կամ օտարերկրյա վարույթը ճանաչելու դիմումներ ներկայացնել Սնանկության դատարան և մասնակցել վարույթին: Օտարերկրյա պարտատերերը սնանկության վարույթ սկսելու և վարույթին մասնակցելու նույն իրավունքները կունենան, ինչպես ՀՀ պարտատերերը: Նախատեսվել են օտարերկրյա հիմնական և լրացուցիչ վարույթների ճանաչման

պայմանները, հետևանքները և ճանաչման հիման վրա տրամադրվող օժանդակությունը, ինչպես նաև համագործակցությունը օտարերկրյա դատարանների և ներկայացուցիչների հետ: Սահմանվել են նաև միաժամանակ իրականացվող վարույթների դեպքում վարույթների համակարգման կանոնները:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ կազմավորված ներպետական և միջազգային փորձագետների հանձնախմբի ներգրավմամբ:

4. Օրենսգրքի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

Սնանկության օրենսգրքի նախագծի, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Կատարողական վարույթի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի մշակումը բխում է Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի «Սնանկության ոլորտի բարեփոխումներ» 8-րդ նպատակի 2-րդ գործողությունից, որով նախատեսվում է սնանկության մասին օրենսդրության մեկ միասնական իրավական ակտի նախագծի մշակում և քննարկում: